Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
ջրային կոմիտեի նախագահի
«19» մայիս 2021 թվականի N 46-Ա հրամանի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՈՌՈԳՄԱՆ ԵՎ ԿՈԼԵԿՏՈՐԱԴՐԵՆԱԺԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ոռոգման և կոլեկտորադրենաժային համակարգերի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Վարչությունը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի, այլ իրավական ակտերի և սույն կանոնադրության հիման վրա:

3. Վարչությունն իր կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակներում իրականացնում է Կոմիտեի խնդիրներից, իրավասությունը սահմանող իրավական ակտերից բխող, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակցությունն ապահովող գործառույթներ:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

4. Վարչության հիմնական խնդիրներն ու նպատակներն են՝

1) ոռոգման և կոլեկտորադրենաժային բնագավառի բարելավմանն ու բարեփոխումներին ուղղված քաղաքականության մշակման և իրականացման աշխատանքներին մասնակցությունը,

2) ոռոգման համակարգերի տեխնիկական վիճակի ուսումնասիրում, կարծիքների և առաջարկների տրամադրումը,

3) ոռոգման համակարգերի նորոգման, վերականգնման, նորերի կառուցման նախապատրաստական աշխատանքների համակարգում, շինարարական աշխատանքների ընթացքի և ավարտական արդյունքների ուսումնասիրություն, եզրակացությունների տրամադրման մասնակցությունը,

4) ոռոգման համակարգերի ծառայություններ մատուցող կազմակերպությունների հիդրոտեխնիկական կառուցվածքների նորոգման և նորերի կառուցման շինարարական աշխատանքների համակարգում և եզրակացությունների նախապատրաստումը,

5) ոռոգման համակարգերի օգտագործման (շահագործման) ծառայություններ մատուցող կազմակերպությունների աշխատանքների ուսումնասիրության հիման վրա առաջարկությունների և եզրակացությունների նախապատրաստումը՝ ոռոգման համակարգերի օգտագործման (շահագործման) մասով,

6) ոռոգման համակարգերի օգտագործման (շահագործման) ծառայություններ մատուցող կազմակերպությունների գործունեության բարեփոխումներին ուղղված վարկային, դրամաշնորհային և այլ ծրագրերի նախապատրաստման և իրականացման աշխատանքներին մասնակցությունը,

7) ոռոգման ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից օգտագործվող ջրի կառավարման ծրագրի սպասարկումը, ընկերությունների կողմից ծրագրի պատշաճ շահագործման ապահովումը,

8) ոռոգման համակարգերի շահագործումը և պահպանումը, բյուջետային, վարկային, դրամաշնորհային ծրագրերի նախապատրաստական աշխատանքների կազմակերպման և իրականացման ընթացքի ապահովման մասնակցությունը, արդյունքների ուսումնասիրությունը, մասնագիտական եզրակացությունների տրամադրման մասնակցությունը,

9) ոռոգման ծառայություններ մատուցող ընկերությունների գործունեությունը բնութագրող ինչպես նաև համակարգի շահագործման և պահպանման, ոռոգման ջրամատակարարման նախապատրաստման և իրականացման վերաբերյալ ցուցանիշների հավաքագրում, ամփոփումը և վերլուծությունը, հաշվետվությունների կազմումը,

10) ոռոգման ծառայություններ մատուցող ընկերությունների՝ ջրամատակարար ընկերություն-ջրօգտագործող հարաբերությունների կանոնակարգումը,

11) ջրօգտագործողներին ոռոգման ջրամատակարարման ծառայությունների մատուցման որակի բարելավմանն ուղղված վերլուծությունների իրականացում, առաջարկությունների ներկայացումը,

12) Սևան-Հրազդան դերիվացիոն համակարգի իշխման տակ ընկած հողատարածքների ոռոգման ջրառաջարկի դեֆիցիտի գնահատման, համակարգով ջրամատակարարման պլան-ժամանակացույցերի կազմման, Սևանա լճից ոռոգման նպատակով ջրբացթողումները սահմանված կարգով իրականացնելու աշխատանքների կազմակերպում, համակարգի արդյունավետ օգտագործման վերաբերյալ առաջարկների ներկայացումը,

13) ոռոգման ջրառաջարկի ծավալների կանխատեսման, պաշարների կուտակման ընթացիկ ցուցանիշների գրանցման, ամփոփման, վերլուծության և համապատասխան առաջարկությունների կազմման աշխատանքների իրականացումը,

14) ոռոգման ջրապահանջի ապահովման հնարավորությունների վերլուծության, գնահատման աշխատանքների իրականացումը,

15) ոռոգման ջրառաջարկի և ջրապահանջի դեֆիցիտի վերլուծության, գնահատման աշխատանքների իրականացումը, այն մեղմելու վերաբերյալ առաջարկների ներկայացումը,

15) ոռոգման համակարգերի գարնան նախապատրաստական աշխատանքների ծրագրի մշակման և համակարգման աշխատանքների իրականացումը,

16) Կոմիտեի իրավասությունների շրջանակներում իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքների տրամադրումը, ոռոգման, Որոտան-Արփա-Սևան հիդրոհամալիրի շահագործման և պահպանման ոլորտում օրենսդրական դաշտի բարելավման, անվտանգության տեխնիկայի ապահովման հետ կապված կարգերի, կանոնների և այլ նորմատիվային փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքներին մասնակցությունը (իրականացում),

17) ոռոգման համակարգերի ջրաչափական դիտակետերում տեղադրված ջրաչափական սարքավորումների տեղադրումը, չափաբերումը, Q(h) կորերի ստեղծումը, աշխատանքների համակարգումը,

18) SCADA համակարգի սարքավորումների կողմից առցանց տրվող տեղեկատվության ամփոփումը,

19) ջրաչափական սարքավորումներով չհագեցած համակարգերում ջրաչափության անհրաժեշտության վերլուծությունը, աշխատանքների իրականացման հնարավորությունների գնահատումը,

20) մելիորատիվ համակարգերի տեխնիկական վիճակի ուսումնասիրումը, կարծիքների և առաջարկների տրամադրումը,

21) մելիորատիվ համակարգերի նորոգման, վերականգնման, նորերի կառուցման նախապատրաստական աշխատանքների համակարգումը, շինարարական աշխատանքների ընթացքի և ավարտական արդյունքների ուսումնասիրումը, եզրակացությունների տրամադրման մասնակցությունը,

22) մելիորատիվ համակարգերի ծառայություններ մատուցող կազմակերպության հիդրոտեխնիկական կառուցվածքների նորոգման և նորերի կառուցման շինարարական աշխատանքների համակարգում և եզրակացությունների նախապատրաստումը,

23) գետերի ջրերի վնասակար ներգործության կանխման և վերացման միջոցառումների կազմակերպման և իրականացման ոլորտում Կոմիտեի կողմից քաղաքականության մշակման աշխատանքների իրականացումը,

24) հակահեղեղային միջոցառումների տարեկան ծրագրերի մշակման և կազմակերպման, համակարգման աշխատանքների իրականացում,

25) հակահեղեղային միջոցառումների առաջնահերթության գնահատումը, պլանավորումը, կազմակերպումը,

26) հակահեղեղային միջոցառումների տվյալների շտեմարանի ձևավորումը և համակարգի կառավարման համակարգչային ծրագրի վարումը,

27) դրենաժային համակարգերի շահագործման, պահպանման աշխատանքների առաջնահերթությունների գնահատում, իրականացման ապահովում, արդյունքների ուսումնասիրություն, եզրակացությունների տրամադրումը,

28) Դրենաժային համակարգերի շահագործման և պահպանման ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի բարելավման, անվտանգության տեխնիկայի ապահովման հետ կապված կարգերի, կանոնների և այլ նորմատիվային փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքներին մասնակցությունը,

29) այլ սուբյեկտների կողմից դրենաժից օգտվելու կարգի ընդունման և կիրարկման ապահովումը,

30) դրենաժային համակարգերի շահագործման և պահպանման ոլորտը բնութագրող ցուցանիշների հաշվառումը, ամփոփումը, վերլուծությունը,

31) ջրամբարաշինության, ոռոգման համակարգերի կառուցման, վերակառուցման ներդրումային ծրագրերի մշակման աշխատանքները,

33) ջրամբարների, ջրանցքների, ջրատարների և դրանց գլխամասային կառուցվածքների, պոմպակայանների՝ համապատասխան կազմակերպությունների կողմից կատարվող ընթացիկ շահագործման և պահպանման աշխատանքների պլանավորման աշխատանքներ, առաջարկությունների տրամադրումը,

32) Կազմակերպությունների, քաղաքացիների դիմումների, բողոքների, առաջարկությունների քննարկման, պարզաբանման, սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման, ամփոփման և տրամադրման, խնդիրների լուծմանն ուղղված առաջարկների ներկայացման աշխատանքներ,

33) համայնքների բյուջեների միջոցով և պետական բյուջեի համաֆիմամսավորմամբ համայնքներում իրականացվող ոռոգման ջրամատակարարման բարելավման սուբվենցիոն ծրագրերի նախագծերի ուսումնասիրություն և առաջարկությունների ներկայացումը,

34) համայնքների բյուջեների միջոցով և պետական բյուջեի համաֆիմամսավորմամբ համայնքներում իրականացվող ոռոգման ջրամատակարարման միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծերի ուսումնասիրություն և առաջարկությունների ներկայացումը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Վարչության գործառույթներն են՝

1) Կոմիտեի նախագահի, նրա տեղակալների և աշխատակազմի ղեկավարի հանձնարարությամբ ուսումնասիրում է ոռոգման և կոլեկտորադրենաժային բնագավառի բարելավմանն ու բարեփոխումներին ուղղված կազմակերպությունների գործունեությունը և նախապատրաստում է առաջարկություններ ու եզրակացություններ դրանց աշխատանքների բարելավման ուղղությամբ,

2) մասնակցում և աջակցում է ոռոգման համակարգերի տեխնիկական վիճակի ուսումնասիրման, օգտագործման (շահագործման) աշխատանքների կազմակերպմանը,

3) մասնակցում է ոռոգման համակարգերի նորոգման, վերականգնման, նորերի կառուցման նախապատրաստական աշխատանքների կազմակերպմանը, նախապատրաստում է առաջարկություններ ու եզրակացություններ շինարարական աշխատանքների վերաբերյալ,

4) մասնակցում է ոռոգման համակարգերի ծառայություններ մատուցող կազմակերպությունների հիդրոտեխնիկական կառուցվածքների նորոգման և նորերի կառուցման շինարարական աշխատանքներին, նախապատրաստում է առաջարկություններ ու եզրակացություններ շինարարական աշխատանքների վերաբերյալ,

5) մասնակցում է ոռոգման համակարգերի օգտագործման (շահագործման) ծառայություններ մատուցող կազմակերպությունների աշխատանքներին, դրանց ուսումնասիրության հիման վրա նախապատրաստում է առաջարկությունների և եզրակացությունների ոռոգման համակարգերի օգտագործման (շահագործման) մասով,

6) մասնակցում է ոռոգման համակարգերի օգտագործման (շահագործման) ծառայություններ մատուցող կազմակերպությունների գործունեության բարեփոխումներին ուղղված վարկային, դրամաշնորհային և այլ ծրագրերի նախապատրաստման և իրականացման աշխատանքներին,

7) մասնակցում է և ապահովում ոռոգման ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից օգտագործվող ջրի կառավարման ծրագրի սպասարկման, ընկերությունների կողմից ծրագրի պատշաճ շահագործմանը,

8) մասնակցում և ապահովում է ռոգման համակարգերի շահագործումը և պահպանումը, բյուջետային, վարկային, դրամաշնորհային ծրագրերի նախապատրաստական աշխատանքների կազմակերպման և իրականացման ընթացքը, ներկայացնում է մասնագիտական եզրակացություններ,

9) մասնակցում է ոռոգման ծառայություններ մատուցող ընկերությունների գործունեությունը բնութագրող ինչպես նաև համակարգի շահագործման և պահպանման, ոռոգման ջրամատակարարման նախապատրաստման և իրականացման վերաբերյալ ցուցանիշների հավաքագրմանը, ամփոփմանը և վերլուծությանը, կազմում է հաշվետվություններ,

10) մասնակցում է ոռոգման ծառայություններ մատուցող ընկերությունների՝ ջրամատակարար ընկերություն-ջրօգտագործող հարաբերությունների կանոնակարգմանը,

11) իրականացնում է ջրօգտագործողներին ոռոգման ջրամատակարարման ծառայությունների մատուցման որակի բարելավմանն ուղղված վերլուծությունների իրականացմանը, ներկայացում էառաջարկություններ,

12) իրականացնում է Սևան-Հրազդան դերիվացիոն համակարգի իշխման տակ ընկած հողատարածքների ոռոգման ջրառաջարկի դեֆիցիտի գնահատման, համակարգով ջրամատակարարման պլան-ժամանակացույցերի կազմման, Սևանա լճից ոռոգման նպատակով ջրբացթողումները սահմանված կարգով իրականացնելու աշխատանքներին, ներկայացնում է համակարգի արդյունավետ օգտագործման վերաբերյալ առաջարկներ, ապահովում է տեղեկատվական նյութերի, հաշվետվությունների կազմումը և ներկայացումը,

13) ապահովում է ոռոգման ջրառաջարկի ծավալների կանխատեսման, պաշարների կուտակման ընթացիկ ցուցանիշների գրանցման, ամփոփման, վերլուծության և համապատասխան առաջարկությունների կազմման աշխատանքների իրականացումը,

14) ապահովում է ոռոգման ջրապահանջի ապահովման հնարավորությունների վերլուծության, գնահատման աշխատանքների իրականացումը,

15) ապահովում է ոռոգման ջրառաջարկի և ջրապահանջի դեֆիցիտի վերլուծության, գնահատման աշխատանքների իրականացումը, այն մեղմելու վերաբերյալ առաջարկների ներկայացումը,

16) ապահովում է ոռոգման համակարգերի գարնան նախապատրաստական աշխատանքների ծրագրի մշակման և համակարգման աշխատանքների իրականացումը,

17) մասնակցում է Արփա-Սևան թունելի պահպանման և շահագործման աշխատանքների կազմակերպմանը,

18) ապահովում է ոռոգման համակարգերի ջրաչափական դիտակետերում տեղադրված ջրաչափական սարքավորումների տեղադրման, չափաբերման, Q(h) կորերի ստեղծման, աշխատանքների համակարգումը,

19) ապահովում է SCADA համակարգի սարքավորումների կողմից առցանց տրվող տեղեկատվության ամփոփումը,

20) մասնակցում է ջրաչափական սարքավորումներով չհագեցած համակարգերում ջրաչափության անհրաժեշտության վերլուծությանը, աշխատանքների իրականացման հնարավորությունների գնահատման աշխատանքներին,

21) մասնակցում է մելիորատիվ համակարգերի տեխնիկական վիճակի ուսումնասիրմանը, ներկայացնում է առաջարկներ,

22) համակարգում է մելիորատիվ համակարգերի նորոգման, վերականգնման, նորերի կառուցման նախապատրաստական աշխատանքները, մասնակցում է շինարարական

աշխատանքների ընթացքի և ավարտական արդյունքների ուսումնասիրմանը, ներկայացնում է եզրակացություն,

23) համակարգում է մելիորատիվ համակարգերի ծառայություններ մատուցող կազմակերպության հիդրոտեխնիկական կառուցվածքների նորոգման և նորերի կառուցման շինարարական աշխատանքները և նախապատրաստում է եզրակացություններ,

24) մասնակցում է ոռոգման և կոլեկտորադրենաժային համակարգերի, հեղեղատարների, գետերի ափապաշտպան կառույցների հիմնանորոգման և նորերի կառուցման համար մրցութային ընթացակարգերով նախատեսված, Վարչության լիազորությունների շրջանակներում իրականացվող աշխատանքներին,

25) մասնակցում է հակահեղեղային աշխատանքների ծրագրավորման, կազմակերպման և իրականացման աշխատանքներին,

26) իրականացնում է դրենաժային համակարգերի շահագործման, պահպանման աշխատանքների առաջնահերթությունների գնահատում, արդյունքների ուսումնասիրություն, ներկայացնում է եզրակացություն,

27) մասնակցում է դրենաժային համակարգերի շահագործման և պահպանման ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի բարելավման, անվտանգության տեխնիկայի ապահովման հետ կապված կարգերի, կանոնների և այլ նորմատիվային փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքներին,

28) ապահովում է այլ սուբյեկտների կողմից դրենաժից օգտվելու կարգի ընդունմանը և կիրարկմանը,

29) մասնակցում է դրենաժային համակարգերի շահագործման և պահպանման ոլորտը բնութագրող ցուցանիշների հաշվառմանը, ամփոփմանը, վերլուծությանը,

30) ապահովում է ջրամբարաշինության, ոռոգման համակարգերի կառուցման, վերակառուցման ներդրումային ծրագրերի մշակման համակարգման աշխատանքների իրականացումը,

31) ապահովում է հիդրոտեխնիկական կառուցվածքների, այդ թվում՝ կոլեկտորադրենաժային ցանցերի, ոռոգման նշանակության ջրամբարների, ջրանցքների, ջրատարների և դրանց գլխամասային կառուցվածքների, պոմպակայանների՝ համապատասխան կազմակերպությունների կողմից կատարվող ընթացիկ շահագործման և պահպանման աշխատանքների պլանավորման գործառույթների իրականացումը,

32) ապահովում է կազմակերպությունների, քաղաքացիների դիմումների, բողոքների, առաջարկությունների քննարկման, պարզաբանման, սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման, ամփոփման և տրամադրման, խնդիրների լուծմանն ուղղված առաջարկների ներկայացման աշխատանքները,

33) իրականացնում է համայնքների բյուջեների միջոցով և պետական բյուջեի համաֆիմամսավորմամբ համայնքներում իրականացվող ոռոգման ջրամատակարարման

բարելավման սուբվենցիոն ծրագրերի նախագծերի ուսումնասիրություն և ներկայացում առաջարկություններ,

34) իրականացնում է համայնքների բյուջեների միջոցով և պետական բյուջեի համաֆիմամսավորմամբ համայնքներում իրականացվող ոռոգման ջրամատակարարման միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծերի ուսումնասիրություն և առաջարկությունների ներկայացում,

35) իրականացնում է Վարչության աշխատողների աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերի վարման աշխատանքները,

36) սահմանված կարգով իրականացնում է Վարչության գործառույթներին առնչվող օրենսդրության բարելավման նպատակով նախապատրաստվող իրավական ակտերի նախագծեր, ինչպես նաև այլ գերատեսչությունների կողմից ներկայացված նախագծերի ուսումնասիրման, քննարկման աշխատանքներ, նախապատրաստում է ներկայացված նախագծերի վերաբերյալ առաջարկություններ, դիտողություններ,

37) իրականացնում է վարչության հիմնական խնդիրների լուծման և նպատակների ապահովմանն ուղղված այլ գործառույթներ:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ, ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

6. Վարչությունն իր գործունեությունն իրականացնում է Կոմիտեի հաստիքացուցակով նախատեսված կազմով:

7. Վարչությունը ղեկավարում է վարչության պետը:

8. Վարչության պետը հաշվետու և անմիջական ենթակա է Կոմիտեի նախագահին և անմիջական հաշվետու է Կոմիտեի գլխավոր քարտուղարին:

9. Վարչության գործունեության համակարգումը վերապահվում է Կոմիտեի գլխավոր քարտուղարին:

10. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետի տեղակալը կամ գլխավոր մասնագետներից մեկը:

11. Վարչության պետի, Վարչության մասնագետների և Վարչության այլ աշխատողների գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը, նրանց գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներն ու կոմպետենցիաները, կառավարման համակարգում տեղակայվածությունը սահմանվում են քաղաքացիական ծառայության համապատասխան պաշտոնների անձնագրերով և աշխատանքային պայմանագրերով: